

Թիւ 566  
Փետրուար 29, 1956

Պատուարժան  
Միսկան Խորհուրդ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Թօրանթօ.

Ազնիւ սիրելիք մեր,

Ստացած ենք Փետրուար 11, 1956 թուակիր ձեր ծխական տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Արժանաշնորհ Տ. Լեւոն Քէնյ. Առաքելեանի նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Մը-խական Խորհուրդի անդամոց ընտրութիւնը եւ ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, պարտաճանաչ եւ անձնուէր անդամներ, կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, զորովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Պարոնայք՝ Պարզեւ Խոճոյեան  
Վահէ՛ Ռենճեան  
Օրիորդ՝ Մարի Փօլատեան

Կ'օրհնենք Միսկան Խորհուրդիդ նորընտիր անդամները եւ վստահ ենք որ անոնք եւս իբրեւ ջանքերը միացնելով ձեր աշխատանքներուն, պիտի գործեն ծուխիդ օգտին, Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով ի Տիառնէ կար ու յաջողութիւն.

Մամօ սիրոյ ողջունիւ  
Աղօթաբար

ՎԱՐԴԱՆ ԱԶՆՅ. ՄԿՐՏԱՆ  
Առաջնորդի Փոխանորդ